

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
YEREVAN STATE UNIVERSITY



# FOREIGN LANGUAGES FOR SPECIAL PURPOSES

№ 4 (13)

YEREVAN STATE UNIVERSITY PRESS  
YEREVAN 2016

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԸ  
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ  
ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

№ 4 (13)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 2016

**Recommended by the Scientific Council of the Department  
of Romance and Germanic Philology, Yerevan State University,  
Republic of Armenia**

- Editor-in-Chief:** **Margarita Apresyan**  
Head of ESP Chair N 1, PhD in Linguistics, professor, YSU, RA
- Honourable members of the editorial board:** **Dora Sakayan**  
Doctor of Philology, professor, McGill University, Canada
- Svetlana Ter-Minasova**  
Doctor of Philology, professor of Moscow State University,  
Dean of the Faculty of Foreign Languages,
- Hans Sauer**  
Doctor of Philology, Institute of English Philology, Munich  
University, Germany
- Charles Hall**  
PhD, associate professor of Applied Linguistics, University of  
Memphis, USA
- Editorial board:** **Samvel Abrahamyan**  
Dean of the Department of Romance and Germanic Philology,  
PhD in History, associate professor, YSU, RA
- Jura Gabrielyan**  
Doctor of Philology, professor  
Head of German Philology Chair, YSU, RA
- Karo Karapetyan**  
Head of Translation Chair,  
PhD in Pedagogics, professor, YSU, RA
- Albert Makaryan**  
Doctor of Philology, professor, YSU, RA
- Yelena Mkhitarian**  
Head of German languages Chair, PhD, professor, ASPU, RA,
- Hasmik Bagdasaryan**  
Head of Romance Philology Chair, PhD, associate professor

Foreign Languages for Special Purposes, Yerevan, Yerevan State University Press, 2016, p. 176.

FLSP international journal, published once a year, is a collection of scientific articles presented by FLSP practitioners inside and out Armenia targeting at professional experience exchange and concurrent development of FLSP methodologies.

Letters and articles for publishing should be sent to the editor-in-chief

E-mail: [english@ysu.am](mailto:english@ysu.am), [margaret.apresyan@mail.ru](mailto:margaret.apresyan@mail.ru)

© Apresyan, M. and others, 2016

© YSU press, 2016

**Հրատարակության և երաշխավորել  
ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի  
գիտական խորհուրդը**

**Գլխավոր խմբագիր՝**

**Մարգարիտա Ապրեայան**

ԵՊՀ անգլերեն լեզվի թիվ 1 ամբիոնի վարիչ, բան.  
գիտ. թեկն., պրոֆեսոր

**Խմբագրական  
խորհրդի**

**Դորա Մաքայան**

բան. գիտ. դոկտ., պրոֆեսոր

**պատվավոր անդամներ՝**

Մթզիլ համալսարան, Մոնրեալ, Կանադա

**Սվետլանա Տեր-Մինասովա**

Բան. գիտ. դոկտ.,

Մոսկվայի պետական համալսարանի պրոֆեսոր,

Օտար լեզուների ֆակուլտետի դեկան,

**Հանս Մաուեր**

Բան. գիտ. դոկտ., պրոֆեսոր

Անգլիական բանասիրության ինստիտուտ, Մյունխենի  
համալսարան

**Չարլզ Հոուլ**

բ.գ.թ., կրտսեր պրոֆեսոր, Մեմֆիսի համալսարան, ԱՄՆ

**Խմբագրակազմ՝**

**Մամվել Աբրահամյան**

ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի  
դեկան, պատմ. գիտ. թեկն., դոցենտ

**Յուրա Գաբրիելյան**

ԵՊՀ գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ,

բ.գ.դ., պրոֆեսոր

**Կարո Կարապետյան**

Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի  
վարիչ, մանկ. գիտ. թեկն., պրոֆեսոր

**Ալբերտ Սակարյան**

բ.գ.դ., պրոֆեսոր, ԵՊՀ

**Ելենա Միխայրյան**

ՀՊՄՀ գերմանական լեզուների ամբիոնի վարիչ,

բան. գիտ. թեկն., պրոֆեսոր

**Համիկ Բաղդասարյան**

Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ

Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար, Եր.: ԵՊՀ հրատ., 2016, 176 էջ:

Գիտական հոդվածների միջազգային ամսագիրը նպատակ ունի հավաքելու և ներկայացնելու Հայաստանի և Հայաստանից դուրս «Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար» (FLSP) ոլորտի մասնագետների մշակած ժամանակակից մեթոդները փորձի փոխանակման և դրանց հետագա զարգացման նպատակով:

© Ապրեայան Մ. և ուրիշ., 2016

© ԵՊՀ հրատ., 2016

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ CONTENTS

<b>Avagyan N., Bagiryan D., Melkonyan R.</b> THE ROLE OF EDUCATIONAL APPS IN LANGUAGE TEACHING AND LEARNING PROCESSES .....	8
<b>Avetikian M.</b> TEACHING FOREIGN LANGUAGE FOR SPECIFIC PURPOSES: TEACHER DEVELOPMENT .....	18
<b>Абрамян С.</b> ЛИНГВОКУЛЬТУРНЫЕ ОСОБЕННОСТИ СОВРЕМЕННОГО АНГЛОЯЗЫЧНОГО ПОЛИТИЧЕСКОГО ДИСКУРСА .....	30
<b>Амирян Н.</b> ОСОБЕННОСТИ ФУНКЦИОНИРОВАНИЯ ПОЛИТИЧЕСКИХ ЭВФЕМИЗМОВ В СМИ ПРИ ОСВЕЩЕНИИ ЧЕТЫРЕХДНЕВНОЙ ВОЙНЫ В НАГОРНОМ КАРАБАХЕ .....	41
<b>Сидоренко Т., Рыбушкина С., Апресян М., Багирян Д.</b> ИНТЕГРАЦИЯ ПРЕДМЕТНО-ЯЗЫКОВОГО ОБУЧЕНИЯ В КОНТЕКСТЕ СТРАТЕГИЙ ИНТЕРНАЦИОНАЛИЗАЦИИ ВУЗОВ ПОСТСОВЕТСКОГО ПРОСТРАНСТВА (НА ПРИМЕРЕ РОССИИ И АРМЕНИИ) .....	50
<b>Тер-Саргсян Л.</b> ПЕРЕВОД КАК КЛЮЧ К ПОНИМАНИЮ НАУЧНОГО ЭКОНОМИЧЕСКОГО ТЕКСТА .....	67
<b>ԱԹՈՅԱՆ Լ.</b> ԹԵՍՄԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ ՀՀ-ՈՒՄ .....	78

**Ապրեսյան Մ., Գյուլգառյան Դ., Տեր-Սարգսյան Լ.**  
ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ  
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ..... 89

**Գրիգորյան Շ.**  
ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ  
ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ ..... 101

**Մարտիրոսյան Մ.**  
«ՀԱՄՈՂՈՒՄ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ..... 111

**Մինասյան Է.**  
ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԻ ԻՍՊԱՆԱԿԱՆ ԹՎԱՅԻՆ  
ՄԱՄՈՒԼՈՒՄ ..... 120

**Սարգսյան Լ.**  
ՏԵՔՍՏԻ ԽՏԱՑՈՒՄԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ  
ԳԻՏԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՈՒՄ ..... 134

**Ոսկանյան Ա.**  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ESP ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ ..... 149

**Սարգսյան Լ.**  
ԼԵԶՎԱԿԱՆ ՏՆՏԵՍՄԱՆ ՎԵՐԱՍՈՒՅԹԱՅԻՆ  
ԴԻՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՍՔՈՒՄ ..... 162

## **ՏԵՔՍԻ ԽՏԱՑՈՒՄԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԳԻՏԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՈՒՄ**

### **ABSTRACT**

#### **FACTORS UNDERLYING TEXT COMPRESSION IN SCIENTIFIC DISCOURSE**

The language economy principle, which is realized in actual communication through text compression, regulates the process of linguistic interaction. To evaluate the text-organizing function of the economy principle realization in discourse, it is important to elaborate on the correlation of economy and redundancy in speech, identify the stage at which text compression occurs, as well as reveal the mechanisms responsible for identifying and decoding compressed constructions. Hence, our focus is on the study of some key linguistic and extralinguistic factors underlying the peculiarities of the economy principle realization in the form of text compression. Namely, the given article is an attempt to investigate the pragmatic factors guiding the process of text compression in scientific discourse.

**Key words:** *language economy, compression, informativity, scientific discourse, pragmatic universe of discourse, academic discourse, presupposition.*

### **РЕЗЮМЕ**

#### **ФАКТОРЫ, ОБУСЛОВЛИВАЮЩИЕ КОМПРЕССИЮ ТЕКСТА В НАУЧНОМ ДИСКУРСЕ**

Принцип языковой экономии, который реализуется в речи посредством компрессии текста, регулирует весь процесс языкового взаимодействия. Определение текстообразующей функции компрессии как способа реализации принципа языковой экономии в дискурсе подразумевает выяснение соотношения языковой экономии и речевой избыточности, определения того, на каком этапе происходит компрессия текста, а также выявления механизмов восприятия сжатых конструкций. Таким образом, основной целью данной работы является выявление некоторых ключевых лингвистических и экстралингвистических факторов, лежащих в основе особенностей реализации принципа экономии в речевом взаимодействии. В частности, в



настоящей статье предпринимается попытка исследовать прагматические факторы, определяющие процесс сжатия текста в научном дискурсе.

**Ключевые слова:** языковая экономия, компрессия, информативность, научный дискурс, прагматический универсум дискурса, академический дискурс, пресуппозиция.

## ԱՄՓՈՓՈՒՄ

Խոսքում տեքստի խտացման միջոցով իրացվող լեզվական տնտեսման սկզբունքը բնորոշում և կարգավորում է մարդկային հաղորդակցության ողջ գործընթացը: Հարցն այն է, թե ինչպես է որոշվում տնտեսում-ավելորդաբանություն հարաբերակցությունը տվյալ խոսքային իրադրությունում, խոսքաստեղծման որ փուլում է տեղի ունենում տեքստի խտացումը, ինչպես են խտացված կառույցները վերծանվում խոսքի հասցեատիրոջ կողմից և այլն: Այլ կերպ՝ գործ ունենք խտացման՝ որպես տնտեսման սկզբունքի իրացման գործընթացի վրա ազդող լեզվական և արտալեզվական գործոնների քննության հետ: Մասնավորապես՝ սույն աշխատանքում փորձ է արվել քննելու գիտական խոսքում լեզվական կառույցների խտացումը պայմանավորող գործաբանական գործոնները:

**Բանալի բառեր՝** լեզվական տնտեսում, խտացում, տեղեկատվայնություն, գիտական դիսկուրս, դիսկուրսի գործաբանական համընդհանրույթ, ակադեմիական դիսկուրս, կանխենթադրույթ:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տեքստաստեղծման գլխավոր նպատակը տեղեկատվության հաղորդումն է: Ցանկացած տեքստ տեղեկատվության կրող է: Մակայն ինչպես «խտացում», այնպես էլ «տեղեկատվություն» տերմինի սահմանումը միանշանակ չէ: Ի.Ռ. Գալպերինը նշում է, որ «տեղեկատվություն» տերմինն օգտագործվում է երկու իմաստով՝ ընդհանուր (առօրյա/կենցաղային) և տերմինաբանական: Առաջին իմաստով տեղեկատվություն ասելով՝ նկատի ունենք ցանկացած հաղորդում՝ ձևակերպված որպես անվանողական բնույթի բառակապակցություն, փաստեր հաղորդող նախադասություն, նախադասությունների ամբողջություն (վերասույ-

թային միասնություն և պարբերություն) կամ ամբողջական տեքստ: Այս մեկնաբանմամբ տեղեկատվությունը սովորաբար նույնացվում է անվանման, իմաստի, բովանդակության հետ: Երկրորդ նշանակությամբ «տեղեկատվություն» տերմինը ենթադրում է միայն օբյեկտիվ իրակա- նության իրերի, երևույթների, հարաբերությունների և իրադարձու- թյունների մասին նոր տեղեկությունների հաղորդում (Гальперин, 2004: 26): Լ.Գ. Լուզինան, խոսելով տեքստում տեղեկատվության բաշխման ճանաչողական և գործաբանական հայեցակերպերի մասին, ներկայաց- նում է «տեղեկատվություն» տերմինի երեք մեկնաբանություն: Առաջին դեպքում նա տեղեկատվությունը նույնացնում է լեզվական միավորնե- րի իմաստի և բովանդակության հետ: Երկրորդ դեպքում նա, ներկայաց- նելով «տեղեկատվություն» տերմինի՝ ճանաչողական լեզվաբանության մեջ ընդունված մեկնաբանությունը, այն սահմանում է որպես հաղոր- դակցության ընթացքում լեզվական միջոցներով ներկայացվող և փո- խանցվող գիտելիք: «Տեղեկատվություն» տերմինի՝ Լ.Գ. Լուզինայի ա- ռաջարկած երրորդ սահմանումը համապատասխանում է Ի.Ռ. Գալ- պերինի կողմից ներկայացվող նեղ տերմինաբանական սահմանմանը (Лузина, 1996: 22): Տեքստում ամփոփված տեղեկատվության ընդհա- նուր ծավալը ընդհանուր առմամբ սահմանվում է որպես տեքստի տե-ղեկատվական հազեցվածություն կամ տեքստի տեղեկատվայնություն: Այսպես՝ Տ.Վ. Ժերեբիլոյի «Լեզվաբանական տերմինների բառարանում» տեղեկատվայնությունը (информативность) սահմանվում է որպես տեղեկատվության խտություն, հազեցվածություն բովանդակությամբ կամ միավոր ժամանակում փոխանցվող տեղեկությունների և գիտելիք- ների քանակ (Жеребило, 2005: 89): Սակայն, հետևելով Ի.Ռ. Գալպերինի կողմից առաջարկված՝ տեղեկատվության նեղ տերմինաբանական սահմանմանը, պետք է նշենք, որ հաղորդակցության տեսանկյունից առավել արժեքավոր է նոր տեղեկատվությունը, և հենց վերջինով է պայմանավորված տեքստի տեղեկատվայնությունը: Այլ կերպ ասած՝ **հակված ենք տեղեկատվայնություն հասկացությունը դիտարկել ոչ թե պարզապես որպես տեքստում պարունակվող ամեն տեսակի**

**տեղեկությունների ամբողջություն և դրանով իսկ տեքստի որակի բացարձակ ցուցիչ, այլ հարաբերական կարգ, քանի որ** հաղորդակցության գործընթացում հաղորդվող տեղեկատվության մեջ նոր բաղադրիչը կամ տեղեկատվայնության աստիճանը «չի կարող դիտարկվել հասարակական, հոգեբանական, գիտատեսական, հանրամշակութային, տարիքային, ժամանակային և այլ գործոններից դուրս: Մի հասցեատիրոջ համար հաղորդումը կարող է լինել նոր և այդ իսկ պատճառով նոր տեղեկատվություն պարունակել, մինչդեռ մեկ ուրիշի համար նույն հաղորդումը կարող է գուրկ լինել որևէ տեղեկատվությունից (մեր կողմից ընդունված տերմինաբանությամբ՝ տեղեկատվայնությունից), քանի որ հաղորդման բովանդակությունը նրա համար արդեն հայտնի է կամ ընդհանրապես անհասկանալի: Այն, ինչ որոշակի ժամանակահատվածի համար նոր էր, հաջորդ պահի դրությամբ արդեն հայտնի է» (Гальперин, 2004: 27): Այստեղ է, որ առաջ է գալիս «հասցեագրող-տեքստ-հասցեատեր» բաղադրիչների եռամիասնության՝ որպես տեղեկատվայնության կարգի ձևավորման մեջ կարևոր դեր կատարող գործոնի հարցը: Տեքստաստեղծման տեսանկյունից հաղորդակցական ակտի կենտրոնական բաղադրիչը հասցեագրողն է, քանի որ հենց նա է կատարում տեղեկատվության հաղորդման նպատակով լեզվական միջոցների ընտրության և խոսքայնացման գործը: Խոսքն իր բոլոր բովանդակային և գործաբանական հատկանիշներով անմիջականորեն պայմանավորված է հասցեագրողի ընտրությամբ, որը նա անում է գիտակցաբար կամ ենթագիտակցաբար: Հասցեագրողը կատարում է լեզվական միջոցների ընտրություն որոշակի հաղորդակցական իրավիճակում՝ կոնկրետ խոսքային գործունեության առանձնահատկություններին համապատասխան: Տեղեկատվությունը չի կարող փոխանցվել ճիշտ այն տեսքով, որով այն առաջ է գալիս, այլ պետք է ձևափոխվի, ենթարկվի յուրատեսակ խտացման, որպեսզի հաղորդվի և համարժեքորեն ընկալվի: Ի.Ռ. Գալպերինն իր հերթին նշում է, որ «ցանկացած հաղորդակցության մեջ զգալի դեր է կատարում ձևը, որում ամփոփված է տեղեկատվությունը» (Гальперин, 2004: 30): Ակնհայտ է, որ **խոս-**

քաստեղծման գործընթացում՝ փոխանցվելիք տեղեկատվության համար համապատասխան խոսքային արտահայտման ձև ընտրելիս, հասցեագրողն առաջնորդվում է որոշակի սկզբունքներով, որոնք էլ հենց պայմանավորում են միևնույն տեղեկատվության հաղորդմանն ուղղված տարբեր մակերեսային շարահյուսական կառույցների գոյության հնարավորությունը: Այս սկզբունքների բացատրությունը հնարավոր է գտնել գործաբանության մակարդակում: Մասնավորապես՝ տեղեկատվության կամ տեքստի բովանդակության արտահայտման համար այս կամ այն շարահյուսական կառուցվածքի ընտրությունը, որն իր հերթին անմիջականորեն կապված է խոսացման՝ որպես տնտեսման սկզբունքի իրացման հետ, պայմանավորված է այնպիսի գործոններով, ինչպիսիք են տեքստում տեղեկատվության բաշխումը (թեմատեմատիկ կազմակերպումը կամ կանխենթադրույթի և նախադրույթի հարաբերակցությունը), հասցեագրողի խոսքային մտադրությունը (խոսողական ակտերի տեսակն ու հերթագայությունը), տեքստի գործաբանական ուղղվածությունը, հաղորդակցության մասնակիցների փոխհարաբերությունը, հաղորդակցական միջավայրը և այլն:

### **ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԽՏԱՅՄԱՆ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

Ինչպես հայտնի է, խոսքային վարքագծի կարևորագույն պայմաններից է հաղորդել այնպիսի տեղեկատվություն, որը կնպաստի հաջորդի համարժեք ընկալմանն ու մեկնաբանմանը: Հետևաբար ասույթների հաջորդական շրջայում առաջնային կարևորություն է ստանում հին կամ հայտնի և նոր տեղեկատվության տարանջատումը: Ընդ որում, լեզվական միջոցների տնտեսման տեսանկյունից կարևոր է այն, որ հին կամ հայտնի տեղեկատվությունը, որպես կանոն, լեզվական միջոցներով ուղղակիորեն չի արտահայտվում, այլ հաղորդվում է որպես կանխենթադրույթ: Այսինքն՝ ասույթի թեման հանդես է գալիս որպես գործաբանական կանխենթադրույթի տարր: Հենց այստեղ է, որ առաջ է

գալիս դիսկուրսի գործաբանական համընդհանրույթ (pragmatic universe of discourse) հասկացությունը, որը ենթադրում է այն կանխենթադրույթների ամբողջությունը, որոնք ընդհանուր են խոսակիցների համար, և որոնք վերջիններս համարում են իրենց համատեղ գիտելիքը (Kempson, 1975): **Ասույթի տեղեկատվայնությունը, հետևաբար և հաղորդակցության արդյունավետությունը որոշվում են ասույթի այն մասով, որը չի մտնում դիսկուրսի գործաբանական համընդհանրույթի մեջ:** Հետևաբար համապատասխան խոսքային ձևակերպում ընտրելիս հարկավոր է հաշվի առնել նշված հանգամանքը:

Ինչպես հայտնի է, հաղորդակցության գործընթացը խոսողական ակտերի շարան է, այսինքն՝ խոսողի նպատակը ոչ միայն պարզապես տեղեկատվության հաղորդումն է, այլև խոսքի միջոցով որոշակի գործողություններ իրականացնելը, ինչպես օրինակ՝ ազդել տեքստի կամ խոսքի հասցեատիրոջ հետագա գործողությունների ընթացքի վրա, փոխել վերջինիս տեղեկացվածության աստիճանը և այլն (իլլուկուտիվ/պերլուկուտիվ ակտեր): Խոսքը հաղորդակցական մտադրության մասին է: Ընդ որում՝ հաղորդակցական ակտը նախագծելիս խոսողը պետք է բավարար պատկերացում ունենա ոչ միայն այն մասին, թե որքանով է խոսակիցը ընկալում խոսողի մտադրությունը, այլև թե խոսակիցն ինչ նպատակ է հետապնդում՝ դառնալով հաղորդակցական ակտի մասնակիցը (Austin, 1962; Searle, 1969): Սա որոշիչ դեր է խաղում հաղորդակցական ակտի ժամանակ խոսողի կողմից սեփական մտադրությունն իրագործելու նպատակով համապատասխան լեզվական միջոցների ընտրության հարցում:

Ինչ վերաբերում է տեքստի գործաբանական ուղղվածությանը, ապա այն մեծապես պայմանավորված է տեքստի տեսակով: Այսինքն, ըստ ժանրային պատկանելության, յուրաքանչյուր տեքստ ենթադրում է համապատասխան հասցեատեր, հետևաբար և վերջինիս ընկալման առանձնահատկություններին համապատասխան՝ լեզվական միջոցների ընտրությունն որոշակի ծավալի և բարդության տեղեկատվության խոսքային ձևակերպման համար:

Համապատասխան ծավալով տեղեկատվություն հաղորդելու նպատակով լեզվական միջոցների ընտրության հարցում կարևորվում է նաև խոսակիցների փոխհարաբերությունը: Հաղորդակցությունը խարսխվում է այն փաստի վրա, որ ցանկացած անհատ սոցիալական էակ է, ով որոշակի հարաբերության մեջ է գտնվում ուրիշ անհատների հետ: Այս կապն արտացոլվում է իրականացվող յուրաքանչյուր հաղորդակցական ակտի մեջ: Հաղորդակցական իրավիճակը ինքնաբերաբար ստեղծում է կոնկրետ սոցիալական և միջանձնային իրականություն, որն ինչպես առաջարկում է շփման և փոխազդման հնարավորություններ, այնպես էլ որոշակի սահմանափակումներ և պարտականություններ է դնում հաղորդակցական ակտի մասնակիցների վրա՝ կապված վերջիններիս ստանձնած դերերի և դրանից բխող վարքագծային կաղապարների հետ: Հետևաբար խոսողը հաղորդակցական ակտը առավել արդյունավետ ելքով իրականացնելու համար պետք է ճիշտ գնահատի իր և խոսակցի փոխհարաբերությունը՝ հետևելով այդ հարաբերությամբ թելադրված կանոններին: Բնականաբար խոսողը նաև պետք է որոշակի պատկերացում ունենա այն մասին, թե ինչպես է խոսակիցը գնահատում իրենց փոխհարաբերությունը և, ըստ այդմ, ինչպիսի կանոնների պահպանում է ակնկալում խոսողից:

Հաղորդակցության գործընթացում լեզվական միջոցների ընտրությամբ պայմանավորված խոսացման վրա մեծապես ազդում է նաև հաղորդակցական միջավայրը: Այսպես՝ հաղորդակցությունը տարածական և ժամանակային առումով մշտապես ամփոփված է որոշակի ֆիզիկական, մշակութային և սոցիալական իրադրության սահմաններում՝ կրելով այդ իրադրության կամ միջավայրի ազդեցությունը: Միջավայրը կարող է հանդես գալ որպես որոշիչ գործոն խոսքաստեղծման գործընթացում, որով պայմանավորված՝ խոսողը որոշում է իրականացնել տվյալ հաղորդակցական ակտը, թե ոչ, կամ իրականացնելու դեպքում ինչպիսի լեզվական միջոցներ գործածել առավելագույն հաղորդակցական արդյունքի ակնկալիքով: Օրինակ՝ եկեղեցու հանդեպ հարգանքը կարող է անհատին թույլ չտալ խոսել պատարագի ժամա-

նակ կամ ծայրահեղ անհրաժեշտության դեպքում խոսել շշուկով՝ գործածելով կրճատ ասույթներ:

Ամփոփելով ասվածը՝ գալիս ենք եզրակացության, որ **գործաբանական բնույթի տեղեկությունները խոսքաստեղծման գործընթացում պայմանավորում են լեզվական միջոցների ընտրությունը և լեզվական միջոցների տնտեսամամբ հնարավորությունն են ստեղծում ընդլայնել տեքստի տեղեկատվական ներուժը:** Մա հանդես է գալիս որպես տեքստի խտացման գործաբանական հիմք: Հենց վերոնշյալ գործաբանական գործոնների համատեքստում պետք է դիտարկել տեղեկատվության խտացման առանձնահատկությունները գիտական դիսկուրսում:

### **ԴԻՍԿՈՒՐՍ ԵՎ ԽՈՍՔ**

Տեղին է նշել, որ «դիսկուրս» տերմինը լեզվաբանության մեջ միանշանակ մեկնաբանություն չունի: Ընդհանուր առմամբ դիսկուրս ասելիս պետք է հասկանալ «կապակցված խոսք, խոսընթացում կազմավորվող ասույթների խոսքաշար, որոնք փոխկապակցված են իմաստային և կառուցվածքային առումով, փոխառնչվում են ըստ խոսքային հաղորդակցման տրամաբանության և չեն խախտում հաղորդակցական դիտավորության բնականոն հաջորդականությունը...» (Պարոնյան, 2011: 48): Մակայն, ինչպես իրավամբ նշում է Շ.Հ. Պարոնյանը, գործաբանական լեզվաբանության մեջ կապակցված խոսքն անվանող մի քանի տերմիններ են կիրառվում (Պարոնյան, 2011: 48): Մասնավորապես՝ սույն ուսումնասիրության շրջանակներում կիրառվում են դիսկուրս և տեքստ տերմինները: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ այս երկու հասկացությունները հաճախ նույնացվում են կամ, ճիշտ հակառակը, տարբերակվում, մասնավորապես՝ դիսկուրսը նույնացվում է բանավոր խոսքի, իսկ տեքստը՝ գրավոր խոսքի հետ: Այսպես՝ Յ.Ե. Չուբարովան, խոսելով անգլերեն գիտաուսումնական դիսկուրսի կառուցվածքային և գործառական առանձնահատկությունների

մասին, դիսկուրսը սահմանում է որպես բանավոր խոսքին բնորոշ երևույթ, որպես «բարդ հաղորդակցական երևույթ, բանավոր խոսքային գործողություն, որը ներառում է հաղորդակցության մասնակիցների և վերջիններիս բնորոշ առանձնահատկությունների մասին պատկերացում տվող սոցիալական համատեքստը և խոսքարտադրման ու խոսքընկալման գործընթացները»: Նեդ իմաստով դիսկուրսը սահմանվում է որպես «լեզվական միավորների կապակցված հաջորդականություն, որը ստեղծվում է խոսողի կողմից որոշակի վայրում, որոշակի պահի, որոշակի նպատակով» (Чубарова, 2008: 27): Մինչդեռ մի շարք այլ լեզվաբաններ նման տարբերակում չեն մտցնում: Օրինակ՝ Տ.Ա. Ֆիլոնենկոն դիսկուրսը սահմանում է որպես «լեզվի՝ գործառապես պայմանավորված կիրառություն որոշակի հանրամշակութային իրադրության համատեքստում» (Филоненко, 2005: 29): Ն.Ա. Միշանկինան, տեքստը սահմանելով որպես «լեզվական կառույց, հաղորդակցության ակտի խոսքային բաղադրիչ, ավարտուն իմաստային կաղապարի իրացում», դիսկուրսը սահմանում է որպես «հաղորդակցական և խոսքային գործոնների ամբողջություն, որոնք պայմանավորում են այս կամ այն ոլորտում ընթացող հաղորդակցության իրականացման միջոցները, որոնք իրենց հերթին նյութական իրացում են ստանում տեքստի տեսքով...» (Мишанкина, 2010: 97-98): Ն.Ա. Միշանկինայի այս մեկնաբանությունը թերևս հարում է դիսկուրսի վերլուծության տեսության մեջ առավել տարածում գտած Ջ. Յուլի և Հ. Ուիդոուսոնի տեսակետին, համաձայն որի՝ **դիսկուրսը բանավոր կամ գրավոր խոսքի գործարկման գործընթացն է, մինչդեռ տեքստը՝ այդ գործընթացի արդյունքը (անգամ եթե այն բանավոր հնչելուց հետո գրի չի առնվում կամ մոտացվում է)** (Widdowson, 2007; Yule, 2002): Մեզ համար միանգամայն ընդունելի է դիսկուրսի և տեքստի այս ըմբռնումը, հետևաբար մեր ուսումնասիրության շրջանակներում թե՛ «դիսկուրս», թե՛ «տեքստ» տերմիններն օգտագործվում են անվանելու ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր խոսքի դրսևորումները՝ իհարկե «գործընթաց-արդյունք» տարբերության գիտակցմամբ:



Ինչ վերաբերում է գիտական խոսք և գիտական դիսկուրս տերմինների մեկնաբանությանը, հարկ ենք համարում մեջբերել Ն.Դ. Արուտյանովայի հետևյալ սահմանումը. «Դիսկուրսը կապակցված տեքստ է իր արտալեզվական՝ գործաբանական, հանրամշակութային, հոգեբանական և այլ գործոններով հանդերձ: Դա տեքստ է, որը իրադրային հայեցակերպ ունի. խոսք է, որը դիտվում է որպես նպատակաուղղված հանրական գործունեություն, որպես բաղադրիչ, որը մասնակցում է մարդկանց փոխներգործության ընթացքում և նրանց գիտակցության կառույցներում (ճանաչողական գործընթացներում): Դիսկուրսը խոսք է, որն «ընկղմված» է կյանքի հոսանքում» (Арутюнова, 1990: 136): Ինչպես երևում է տվյալ սահմանումից, դիսկուրս տերմինը վերաբերում է գործարկվող խոսքին, խոսքային գործունեությանն իր լեզվական և արտալեզվական առանձնահատկությունների ամբողջության մեջ, մինչդեռ խոսք տերմինը հանդես է գալիս առավել չեզոք և ընդհանուր նշանակությամբ: Հետևաբար մեր պատկերացմամբ գիտական դիսկուրսը նույն գիտական խոսքն է, պարզապես տվյալ արտահայտության մեջ դիսկուրս բառի առկայությամբ ընդգծվում է այն փաստը, որ **գիտական հաղորդակցությունը, ինչպես նաև ցանկացած այլ ոլորտում տեղի ունեցող խոսքային փոխներգործություն, ընթանում է որոշակի արտալեզվական գործոնների համատեքստում և մշտապես կրում է դրանց ազդեցությունը:**

### **ԳԻՏԱԿԱՆ ԴԻՄԿՈՒՐՍԻ ԲՆՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Դիսկուրսի տիպաբանության հարցը մինչ օրս շարունակում է մնալ դիսկուրսի լեզվաբանության առաջատար խնդիրներից մեկը: Բանն այն է, որ գոյություն ունեն դիսկուրսի դասակարգման բազմազան սկզբունքներ: Հանրալեզվաբանության տեսակետից դիսկուրսի հիմնական տեսակների դասակարգման հիմքում ընկած են հաղորդակցության մասնակիցների փոխհարաբերությունը, մասնավորապես՝ հան-

րային դերերը և կարգավիճակը, ինչպես նաև հաղորդակցական նպատակները: Այսպես՝ Վ.Բ. Կարասիկը, ով մեծ ավանդ ունի գիտական դիսկուրսի ուսումնասիրության գործում, առանձնացնում է դիսկուրսի երկու հիմնական տեսակ՝ անձնային և ինստիտուցիոնալ (Карасик, 2002): Առաջին դեպքում խոսքերը հանդես են գալիս որպես անհատներ՝ ուրույն հարուստ ներաշխարհով, և նրանց նպատակն է հաղորդակցության միջոցով լուծել կենցաղային, առօրեական խնդիրներ, մինչդեռ ինստիտուցիոնալ դիսկուրսը հաղորդակցություն է, որն ընթանում է դերային և կարգավիճակային հարաբերությունների շրջանակում: Մասնավորապես՝ դիսկուրսի այս տեսակի մասնակիցները հարաբերվում են ոչ թե որպես անհատներ, այլ որպես հասարակության այս կամ այն ինստիտուտի ներկայացուցիչներ (օրինակ՝ գիտնականները՝ գիտական դիսկուրսում, քաղաքական գործիչները և ընտրողները՝ քաղաքական դիսկուրսում, քննիչն ու մեղադրյալը՝ իրավաբանական դիսկուրսում, ուսուցիչն ու աշակերտը՝ մանկավարժական դիսկուրսում, բժիշկն ու հիվանդը՝ բժշկական դիսկուրսում և այլն), և նրանց նպատակն է «հատուկ» տիպի տեղեկատվության հաղորդումն ու ստացումը, ինչպես նաև դրա արդյունքում «հատուկ» նպատակների և խնդիրների իրականացումը (օրինակ՝ գիտական տեսության տարածում և փորձի փոխանակում, քարոզարշավի իրականացում, նախաքննության կատարում, ուսուցում, բուժօգնության տրամադրում և այլն): Վ.Բ. Կարասիկը առանձնացնում է գիտական դիսկուրսը ինստիտուցիոնալ դիսկուրսի մի շարք այլ տարատեսակների կողքին, ինչպես օրինակ՝ մանկավարժական, քաղաքական, իրավաբանական, ռազմական, քննադատական, բարոյագիտական, վարչական, կրոնական, բժշկական, գովազդային, զանգվածային-լրատվական և այլն:

Վ. Բ. Կարասիկը տարբերակում է գիտական դիսկուրսի հետևյալ բաղադրիչները (Карасик, 2004).

ա. Մասնակիցներ,

բ. Նպատակներ, որոնք ենթադրում են հասցեատիրոջ կողմից հին գիտելիքի հիման վրա նոր գիտելիքի ձեռքբերմանն ուղղված գործու-

նեություն, որտեղ հասցեագրողի նպատակը և խնդիրը հասցեատիրոջ տեղեկացվածության և հաղորդակցությունից վերջինիս ունեցած ակնկալիքների մասին սեփական պատկերացումների հիման վրա տեղեկատվության հաղորդումն է: Այլ կերպ ասած՝ ենթադրվում է, որ գիտական դիսկուրսի մասնակիցը որոշ չափով ծանոթ է այլ գիտական տեքստերում ներկայացված հասկացություններին, գաղափարներին և տեսություններին, ինչը հասցեագրողին թույլ է տալիս տեղեկատվության որոշակի հատված հաղորդել ներակա կերպով՝ առանց տեքստի տեղեկատվական ամբողջականության խաթարման: Ընդ որում, ներակայվող տեղեկատվության ծավալը գիտական դիսկուրսի յուրաքանչյուր տարատեսակի և յուրաքանչյուր ժանրային դրսևորման համար տարբեր է: Ուստի գիտական դիսկուրսում տեղեկատվությունը ներակա կերպով հաղորդելու, հետևաբար և այն խտացնելու հարցում կարևոր դեր է խաղում միջտեքստայնությունը, որը դրսևորվում է ուղիղ և անուղղակի մեջբերումների, տերմինաբանական կապերի, հղումների և այլնի հաշվին:

գ. Քրոնտոտպը, որը ներառում է գիտական երկխոսությանը հատուկ միջավայրը և ժամանակը, որում այն ընթանում է: Ընդ որում, այս կապակցությամբ պետք է հաշվի առնել երկու կարևոր նկատառում: Գրավոր հաղորդակցության դեպքում գիտական դիսկուրսի մասնակիցների քրոնտոտպները չեն համընկնում, և գիտական դիսկուրսը միջտեքստայնության հաշվին դուրս է գալիս լոկալ ժամանակային սահմաններից:

դ. Արժեքները, որոնց շարքում Վ.Ի. Կարասիկն առանձնացնում է ճշմարտությունը, գիտելիքը և հետազոտությունը (Карасик, 2004: 231): Այս շարքին կարելի է վերագրել նաև գիտականության չափանիշները:

ե. Ռազմավարությունը, մասնավորապես՝ գիտական դիսկուրսի ռազմավարական խնդիրների շարքում Վ.Ի. Կարասիկը նշում է «ստացված արդյունքները մասնագետների և ոչ մասնագետների համար ընդունելի ձևով շարադրելու» կարևորությունը (Карасик, 2004: 231), որը ենթադրում է համապատասխան լեզվական միջոցների ընտրություն:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ գիտական դիսկուրսի ռազմավարությունը կախված է հաղորդակցության ձևից (գրավոր կամ բանավոր) և ժանրից (օրինակ՝ գիտական հոդված, մենագրություն, գիտաժողովի զեկույց և այլն), հաղորդակցության պայմաններից՝ իրական կամ վիրտուալ հաղորդակցություն, ինչպես նաև թիրախային լսարանից:

գ. Թեմատիկան, որը որոշվում է՝ ըստ գիտության համապատասխան բնագավառի: Վ.Ի. Կարասիկը երկու հիմնական թեմատիկ ուղղություն է առանձնացնում՝ հումանիտար և բնագիտական (Карасик, 2004: 232): Ըստ թեմատիկ ուղղվածության՝ գիտական տեքստերը տարբերվում են նաև լեզվառձական առանձնահատկություններով:

է. Տարատեսակներ և ժանրեր, որոնց թվում առանձնացվում են ակադեմիական կամ բուն գիտական դիսկուրսը, գիտահանրամատչելի (գիտահրապարակախոսական) դիսկուրսը, դիդակտիկ կամ գիտատուսմնական, գիտագործնական (գիտատեղեկատվական) դիսկուրսը, գիտաքննադատական դիսկուրսը և այլն:

ը. Դիսկուրսիվ բանաձևերը, որոնք վերաբերում են գիտական դիսկուրսի իմաստաբանական և շարահյուսական առանձնահատկություններին: Դրանք ներկայացված են գիտության ենթալեզվում՝ գիտական ոճում, որին հատուկ է վերացականությունը, տրամաբանականությունը, միանշանակությունը և չեզոքությունը: Դա պայմանավորված է գիտական գործունեության գլխավոր նպատակով, որն է՝ գիտական տեղեկատվության ճշգրիտ, տրամաբանական և միանշանակ հաղորդումը:

թ. Նախադեպային տեքստերը, մասնավորապես՝ գիտական հաղորդակցությունը ենթադրում է անդրադարձ գիտության այս կամ այն ոլորտի շրջանակներում ձևավորված գիտելիքների համակարգին: Այդ իսկ պատճառով գիտական դիսկուրսի հիմնական բնութագրիչներից մեկը միջտեքստայնությունն է: Վ.Ե. Չերնյավսկայան առաջարկում է դիտարկել միջտեքստայնությունը որպես «բովանդակության մակարդակում գիտական տեքստի կառուցման համընդհանուր սկզբունք» (Чернявская, 2006: 49): Տեքստի մեջ այլ հեղինակի տեքստից վերաբերու-

թյան ձևով բառերի և բառակապակցությունների ներմուծումը, ըստ երևույթին, գիտական դիսկուրսում տեղեկատվության խտացման միտում է, որի դեպքում մի ամբողջ գաղափար, հասկացություն կամ նույնիսկ տեսություն խտացվում է մեկ տերմինի, տերմինաբանական արժեք ունեցող բառակապակցության կամ ասույթի սահմաններում: Այս կերպ հղում է կատարվում դեպի գիտական իմացության մի ամբողջ ոլորտ, որը ենթադրաբար այնքան ծանոթ է խոսքի հասցեատիրոջը, որ կարիք չկա այն արտակա կերպով ներկայացնելու տեքստի մակերեսային կառուցվածքում:

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Ինչպես ցույց է տալիս գիտական դիսկուրսի տիպաբանության վերլուծությունը, գիտական տեքստերի ստեղծման հարցում, բացի բուն ներլեզվական պատճառներից, մեծ է նաև արտալեզվական գործոնների դերը, որոնց բացատրությունը հնարավոր է գտնել գործաբանության մակարդակում: Սա թույլ է տալիս հաղորդակցության գործաբանական առանձնահատկությունները դիտարկել որպես գիտական դիսկուրսում լեզվական միջոցների ընտրությունը և համապատասխան գուգակցումը, հետևաբար և տեքստի խտացումը պայմանավորող երևույթ:

Ինչպես գիտենք, տեղեկատվական հազեցվածությունը, մի կողմից, և խոսքի տրամաբանականությունն ու հակիրճությունը, մյուս կողմից, գիտական խոսքի բնորոշ առանձնահատկություններից են, ինչի լավագույն ապացույցը գիտական խոսքում այնպիսի սեղմ լեզվական կառույցների առատ գործածությունն է, ինչպիսիք են դերբայական դարձվածները, անկախ կառույցները, գեղչված նախադասությունները, տարատեսակ մեջբերումները, աղյուսակները, գծապատկերները և այլն, որոնք բոլորը խոսքի խտացման օրինակներ են: Հետևաբար կարելի է պնդել, որ որպես լեզվական տնտեսման սկզբունքի իրացման միջոց հանդես եկող խտացումը գիտական խոսքի անբաժան մասն է: Եվ

ինչպէս ցանկացած հասարակական երևոյթ, այն, բացի ներքին պատճառներից, ունի նաև արտաքին պայմանավորվածություն:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Պարոնյան Շ.** (2011), Լեզվաճանաչողություն և դիսկուրս, Երևան, ԵՊՀ հրատ., 298 էջ:
2. **Austin J.L.** (1962), How to Do Things with Words. Oxford: Clarendon Press, 168 p.
3. **Kempson M.R.** (1975), Presupposition and the Delimitations of Semantics. Cambridge: Cambridge University Press, 235 p.
4. **Searle J.R.** (1969), Speech Acts: An Essay in the Philosophy of Language. Cambridge: Cambridge University Press, 203 p.
5. **Widdowson H.G.** (2007), Discourse Analysis. Oxford: Oxford University Press, 126 p.
6. **Yule G.** (2002), Pragmatics. Oxford: Oxford University Press, 127 p.
7. **Арутюнова Н.Д.** (1990), Лингвистический энциклопедический словарь. Москва: Советская энциклопедия, 682 с.
8. **Гальперин И.Р.** (2004), Текст как объект лингвистического исследования. Москва: Эдиториал УРСС, 144 с.
9. **Жеребило Т.В.** (2005), Словарь лингвистических терминов. Назрань: Издательство "Пилигрим", 376 с.
10. **Карасик В. И.** (2002), Языковой круг: личность, концепты, дискурс и текст. Волгоград: Перемена, 476 с.
11. **Карасик В.И.** (2004), Языковой круг: личность, концепты, дискурс. Москва: Гнозис, 390 с.
12. **Лузина Л.Г.** (1997), Распределение информации в тексте: когнитивный и прагматический аспекты. Москва: УРСС, 139 с.
13. **Филоненко Т.А.** (2005), Жанрово-стилистические характеристики англоязычного научно-методического дискурса. Самара: Самарский государственный педагогический университет, 181 с.
14. **Чернявская В.Е.** (2006), Интерпретация научного текста. Москва: КомКнига, 248 с.
15. **Чубарова Ю.Е.** (2008), Функционально-структурные особенности и про-содические средства выражения дискурсивных элементов англоязычного учебно-научного дискурса. Саранск: Мордовский государственный университет, 171 с.